

Քսան տարի էր, որ Վասկանուշ Բագրատունի օրհորդը մայրապետ եղած էր կուսանաց. իր իմաստուն կառավարութեամբ խաղաղութիւն եւ երջանկութիւն կը տիրէին ոչ միայն վանքին մէջ՝ այլ բոլոր փոքր շրջակայքը, ուր իւր ձեռքը կը հասներ: Ինչպէս վանքին մէջ հարստահարութիւն չի կար, նոյնպէս հարկատու գիւղորդից մէջ արդարութիւն կը տիրէր, վասնզի ամէնքը կոյս իշխանուհուոյն աղերսագիր կրնային հասցնել: Վա՛յ էր այն անձին, որ խեղճի մը բողոքը խղդէր եւ իր աղերսը արգիլէր:

Հարուստ հայրենի ժառանգութեամբ եւ միշտ չափաւոր եւ խնայող իւր ծախուց մէջ, գեղեցկացուցեր էր վանքը շինութեամբ, բարեկեց ըրեր էր նոցայ կեանքը, որ իւր իշխանութեան տակն էին, եւ ոչ ոք կար կուսանաց մէջ, որ ակամայ կրօնաւորութեան լուծը տանէր. եւ կ'արձակէր կուսանքը իրենց հայրենական տները, կամ սխալմանց կը ներէր, որ աններելի կը համարէին շատ կրօնաւորք, մեղադրողաց նա կը պատասխանէր թէ Քրիստոսի «լուծը քաղցր եւ բեռն փոքրոգի» պիտի լինի եւ թէ հրամայած է «կարողին միայն տանել»:

Վասկանուշ իւր պարզ եւ սել հագուստներուն մէջ եւ իւր սպիտակ քօղին տակ վայելուչ կերպարանքով եւ հասակաւ՝ թեպէտ քառասունհինգն գտած՝ երեսունհինգ կ'երեւէր: Իւր գեղեցիկ աչքերուն վսեմ նայուածքը պատկառանք կ'ազգէին եւ մեծ ու փոքր ակնածութեամբ իրեն կը մերձենային: Թեպէտ միշտ զբաղած՝ ոչ երբեք իւր կրօնական պարտքերեն կը պակսէր, այլ կոչնակին ձայնին հնազանդ՝ միշտ եկեղեցին կը գտնուէր ներկա սաղմոսերգութեանց, եւ միշտ սեղանատունը հասարակաց սեղանը կը ճաշէր հաւասար ամէնուն: Իր ծանր եւ ազնիւ վարմունքը եւ առաքինի օրինակը պաշտելի էակ մը ըրած էին զինք իւր կուսանաց:

Այն ճմեռուան մէջ, որ Հայաստանի կէս մասը արաբական բարբարոսութեան ոտնակոխ եղած կ'ողբար եւ միւս մասը ամառուան համար կը սարսէր, Վասկանուշ Տարոնոյ եւ Վասպուրականի փախստականներէ կ'իմանար իր հայրենի երկրին վիճակը եւ աւերածը. եւ երբ այն մտածութեամբ իւր